ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Հայաստանի Հանրապետութեան նախարարների Խորհրդի նախագահ Վազգէն Մանուկեանը, երեքշաբթի, Մայիսի 7ին, ընդունեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայ Դատի կենտրոնական յանձնախմբի ներկայացուցիչ Հրայր Պալեանին եւ Հ.Յ.Դ. Հայաստանի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ռուբէն Յովսէփեանին:

Հանդիպման ժամանակ Պալեանը զեկուցեց վարչապետին Գետաշէնի բնակչութեան դէմ խորհրդային կենտրոնական իշխանութիւնների եւ ադրբեջանական ուժերի կատարած անմարդկային արարքների ու Հայաստանի սահմանամերձ շրջանների վրայ կատարած յարձակումների կապակցութեամբ Հայ Դատի յանձնախմբի ձեռնարկած աշխատանքների մասին:

Վարչապետը յաւելեալ տեղեկութիւններ տուեց հայրենի իշխանութեան դիմագրաւած ճգնաժամի գծով:

Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչը վարչապետին յայտնեց, թէ կազմակերպութիւնը իր ամբողջ կարելիութիւնները դնում է հայրենի իշխանութեան տրամադրութեան տակ:

Հ.Յ.Դ. Հայաստանի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ռուբէն Յովսէփեանը իր կարգին կրկնեց իր կուսակցութեան պատրաստակամութիւնը թիկունք կանգնելու հայրենի իշխանութեանը՝ դիմագրաւելու համար ճգնաժամը: